ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

N 10.2/13782-20

«10» 08 2020թ.

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զոհրաբյան,

Ի պատասխան Ձեր՝ Քրեական դատավարության, Քաղաքացիական դատավարության և Վարչական դատավարության օրենսգրքերի շրջանակներում փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելու հնարավորություն նախատեսող նորմերի փոփոխման վերաբերյալ գրության՝ հայտնում եմ հետևյալը.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերով դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները.

1) նկատողություն.

2) դատական նիստերի դահլիճից հեռացում.

3) դատական տուգանք:»:

Նույնաբովանդակ կարգավորումներ են նախատեսված նաև Քրեական դատավարության և Վարչական դատավարության օրենսգրքերով:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է դատական սանկցիա կիրառելու նպատակը և հիմքերը: Մասնավորապես, նշյալ հոդվածով սահմանվում է, որ դատական սանկցիան

ՄՈՒՏՔ № 1771-20
11 08 2020թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

կիրառվում է դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելու, ինչպես նաև դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով: Դատարանը դատական սանկցիա կարող է կիրառել, երբ անձը չարաշահում է իր դատավարական իրավունքները կամ չարամտորեն չի կատարում իր դատավարական պարտականությունները, չի ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտում է դատական նիստի կարգը, դատական նիստի դահլիճում անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ:

Հարկ է փաստել, որ դատական սանկցիաները, այդ թվում՝ դատական տուգանքը, որպես դատավարական սանկցիա նախատեսված է մի շարք երկրների (Ուկրաինա, Բելառուս, Լիտվայի Հանրապետություն, Մոլդովա, Գերմանիա, Ավստրիա, Չեխիա, Ֆրանսիա, Անգլիա, Շոտլանդիա, Իռլանդիա, Սլովենիա, Կիպրոս)[1] օրենսդրություններով:

Այսպիսով, միջազգային փորձի ուսումնասիրությունը և ներպետական օրենսդրության կարգավորումներից բխում է, որ դատական սանկցիաներ կիրառելու նպատակը, դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելը և դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելն է: Միևնույն ժամանակ, դատական տուգանքը որպես դատավարական սանկցիայի տեսակ նպատակ է հետապնդում ազդել դատական նիստի կարգը խախտող անձի վրա կամ հարկադրել նրան բարեխղճորեն կատարել իր պարտականությունները: Ընդ որում, դատական տուգանքը դատավարական ցանկացած հարկադրանքի միջոցին բնորոշ այլ հատկանիշներից զատ ունի նաև այլ առանձնահատկություններ, մասնավորապես տուգանային բնույթ և ծառայում է որպես պատժիչ միջոց դատավարական իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ, վերջիններիս համար առաջացնելով անբարենպաստ հետևանքներ:[2]

Ինչ վերաբերվում է գրությամբ մատնանշված Եվրոպայի նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. Nrec(2000)21 հանձնարարականի 1-ին սլզբունքի 4-րդ կետին, համաձայն որի փաստաբանները չպետք է տուժեն հետևանքներից կամ ենթարկվեն

---

[1] Ուկրաինայի, Բելառուսի, Լիտվայի Հանրապետություն, Մոլդովայի, Գերմանիայի, Ավստրիայի, Չեխիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Շոտլանդիայի, Իռլանդիայի, Սլովենիայի, Կիպրոսի դատավարական օրենսգրքեր:

[2] Գասպարյան Կլարա, «Դատական տուգանք դատավարական սանկցիայի որոշ հիմնախնդիրներ», ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2019, էջ 168

ցանկացած պատժամիջոցների կամ ճնշումների վտանգի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան, ապա անհրաժեշտ է նշել, որ նույն այդ հանձնարարականում նշվում է, որ իրավաբանները պետք է հարգեն դատական համակարգը և կատարեն իրենց պարտականությունները դատարանի նկատմամբ՝ ներքին օրենսդրության և մասնագիտական չափանիշներին համապատասխան: Նույն հանձնարարականի պարզաբանումների 49-րդ կետում նշվում է, որ պատշաճ լսումների ապահովման նպատակով դատարանները պետք է օգտագործեն օրենքով նախատեսված ցանկացած սանկցիա, այդ թվում՝ տուգանքի նշանակում: Արդեն իսկ ինչ վերաբերվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատության իրավունքին, ապա այն չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Ավելին, դատական նիստերի դահլիճում իրավաբանի խոսքի ազատությունը անսահմանափակ չէ, և որոշակի շահերը, ինչպիսիք են, օրինակ, դատական համակարգի հեղինակությունը, բավականաչափ կարևոր են, որպեսզի արդարացվեն 10-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները:

Բացի վերոշարադրյալից անհրաժեշտ է փաստել նաև, որ Քաղաքացիական դատավարության շրջանակներում դատական տուգանքը՝ որպես դատական սանկցիայի տեսակ, սահմանվել է Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), որն ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին: Ընդ որում, «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությամբ 439-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «6. Գործի քննությանը մասնակցող դատախազի և որպես կողմի ներկայացուցիչ մասնակցող փաստաբանի նկատմամբ դատական տուգանքը որպես դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ դրույթները գործում են 2019 թվականի հունվարի 1-ից:»:

2020 թվականի հուլիսի 10-ի թիվ /10.2/15312-2020 ելից գրությամբ Արդարադատության նախարարության կողմից հարցում է ուղարկվել Դատական դեպարտամենտ՝ պարզելու թե 2019 թվականի հունվարի 1-ից մինչ օրս դատարանների կողմից դատական տուգանքը որպես դատական սանկցիա քանի փաստաբանի նկատմամբ է կիրառվել: Ի պատասխան հարցման՝ Դատական դեպարտամենտի կողմից ստացվել է գրություն առ այն, որ ՀՀ առաջին ատյանի և

վերաքննիչ դատարաններին ուղարկված հարցման համաձայն Օրենսգրքի շրջանակներում ՀՀ դատարանների կողմից 2019 թվականի հունվարի 1-ից մինչ այսօր դատական տուգանքը որպես դատական սանկցիա փաստաբանների նկատմամբ չի կիրառվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ դատական տուգանքի՝ որպես դատական սանկցիայի կիրառումը ոչ թե դատարանի ցանկությունն է, այլ դատարանի պարտականությունը այն դեպքում, երբ առկա է իրավունքի չարաշահում կամ չարամտորեն դատավարական պարտականությունները չեն կատարվում, չեն ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտվում է դատական նիստի կարգը, կամ առկա է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում: Ուստի՝ դատարանում իրենց սեփական նպատակների համար ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում համապատասխան սուբյեկտներն իրենց գործողություններով խախտում են իրենց իսկ մասնագիտական պարտականությունները: Հետևաբար, իրավահավասարության սկզբունքից ելնելով, դատավարության մասնակիցները, այդ թվում՝ փաստաբանները, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու կամ դատավարական պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում պետք է կրեն նույն իրավական հետևանքները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

8/7/2020

X

Rafik Grigoryan

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Ջեմմա Կարապետյան
Իրավական ապահովման վարչություն
Հեռ. (010) 59-41-84

СЕКРЕТАРИАТ

МИНИСТЕРСТВО ... РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

[illegible]

10.2/13782

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ք. ԵՐԵՎԱՆ, Վազգեն Սարգսյան 3/8

Ելք № ____

5